# «QUID»-Ը ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Ըստ ցեղասպանության միջազգային չափանիշներով ճանաչված սահմանման այն, ինչ տեղի է ունեցել արևմտահայության հետ XX դարի սկզբին՝ խաղաղ բնակչության բռնի տեղահանությունն իր հայրենիքից և բռնագաղթը Սիրիայի ու Միջագետքի անապատներ, թուրքական բանակ զորակոչված հայ տղամարդկանց զինաթափումն ու ոչնչացումը, ազգի հոգևոր առաջնորդների բնաջնջումը, կարելի է որակել որպես ցեղասպանություն, ավելին՝ «օրինակելի ցեղասպանություն», ինչպես այն անվանում է «Հայաստանը 1915-ին» գրքի հեղինակ Ժան-Մարի Կառզուն: Այս որակումը, ինչպես հայտնի է, լուրջ անհանգստություն է պատճառում թուրքական պաշտոնական շրջաններին և մղում նրանց պատմության նենգափոխումների՝ ցեղասպանության իրողությունը ժխտելու և համաշխարհային հասարակայնությանն ապակողմնորոշելու համար՝ պատճառաբանելով, որ հայերն ապստամբել են և թուրքերը ստիպված են եղել ճնշել այդ ապստամբությունները: Իսկ տեղահանությունը որակվել է որպես պատերազմական վիճակից բխող «տեղափոխություն»:*

*Արդեն 1915թ. կեսերին միջազգային հանրությունը քաջատեղյակ էր Հայոց ցեղասպանության մասին: Այն քողարկել հնարավոր չէր: Ինչպես հայտնի է՝ 1915թ. մայիսի 24-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները միացյալ հանդես եկան հրապարակային նախազգուշացմամբ՝ ուղղված Թուրքիայի կառավարությանը: Այդ հայտարարությունն այսօր կարելի է համարել Հայոց ցեղասպանությունը դատապարտող առաջին միջազգային փաստաթուղթ, որը աշխարհի զրեթե բոլոր երկրներին ազդարարեց, որ «Հայաստանում տեղի են ունեցել հայերի կոտորածներ քրդերի ու թուրքերի կողմից, օսմանյան իշխանությունների բացահայտ թողտվությամբ, իսկ հաճախ էլ՝ ուղղակի համագործակցությամբ»:*

*Առաջին անգամ միջազգային ասպարեզում երեք խոշոր տերությունները հայերի դեմ կատարված ոճրագործությունը որակեցին որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ» Թուրքիայի կողմից կատարած նոր հանցագործություն, որոնց համար «... անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա՝ տեղական այն իշխանությունների վրա, ովքեր մասնակից են դարձել նման կոտորածին»:*

*Այդ հայտարարությունն ավելի ուշ՝ երեսուներեք տարի անց, իր այլափոխված արտահայտությունը գտավ 1948թ. դեկտեմ-*

*բերի 9-ին՝ Միավորված ազգերի կազմակերպության կողմից ցեղասպանությունը կանխելու և պատժելու մասին կոնվենցիայում:*

*Մենք պարտավոր ենք այսօր ամբողջ ուժերով հակահարված տալ թուրք և ոչ միայն թուրք, այլև արևմտյան քարոզչությանը, որը հայ ժողովրդի դեմ գործած հանցագործությունը ժխտելու համար զբաղվում է փաստերի նենգափոխումով ու պատմական կեղծարարությամբ: Այս իրավիճակը պահանջում է գիտական խորությամբ ու փաստարկներով աշխարհին հասցնել ճշմարտությունը:*

*Այս առնչությամբ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Ռոյտերս և AFP գործակալությունների հաղորդագրությունները՝ Փարիզի դատարանի՝ «Quid»-ում 1915թ. Հայոց ցեղասպանության փաստի սխալ ներկայացման համար «Ռոբեր Լաֆֆոն» հրատարակչությանը դատապարտելու մասին:*

«QUID»-Ը ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ՝ ԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ
*Ռոյտերս 06.07.05*

Փարիզի դատարանը չորեքշաբթի դատապարտել է «Ռոբեր Լաֆֆոն» հրատարակչությանը 2002-2004թթ. «Quid»-ում 1915թ. Թուրքիայում հայերի ցեղասպանության սխալ ներկայացման համար: Հրատարակիչը պետք է մեկ եվրո խորհրդանշական փոխհատուցում տա չորս հայկական ասոցիացիաների և բացի դրանից՝ պետք է հրապարակի երեք օրաթերթ և երեք շաբաթաթերթ և ինտերնետ էջում զետեղի պաշտոնական հաղորդագրություն՝ հայտարարելով պատմական իրադարձության ներկայացման սխալ լինելը: ...Դատարանը հաստատում է, որ «Quid»-ը սխալ է թույլ տվել «Թուրքիա» և «Հայաստան» հոդվածներում որպես հավանական ինֆորմացիաներ ներկայացնելով հերքող պատմաբանների կողմից հաստատված ցեղասպանության՝ իրականությունից տարբերվող արդյունքներ: Նա հանդիմանում է նաև աշխատությանը՝ իրադարձության վերաբերյալ թուրքական և հայկական կողմերի դիրքորոշումները կողք-կողքի դնելիս առաջինին առաջնություն տալու և այնպիսի հերքող տերմիններ օգտագործելու համար, ինչպիսին է օրինակ «ճամփորդությունը» տերմինը՝ «դեպորտացիայի» փոխարեն: Ի վերջո «Quid»-ը դատապարտվում է նաև այն թեզին վստահելու համար, ըստ որի հայերն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում կոտորվել են Ռուսաստանի հետ համագործակցության պատճառով: «Այս սխալն անշուշտ այդ [հայկական] համայնքի բարեկամներին ու ժառանգներին անհանգստություն և բարոյական ցավ է պատճառում», - նշում է դատարանն իր հիմնավորման մեջ: Թուրքիայի կողմից 1915թ. իրագործված Հայոց ցեղասպանությանը (ճանաչված՝ ՄԱԿ-ի, Եվրապառլամենտի, Եվրոպայի խորհրդի և ֆրանսիական պառլամենտի կողմից) զոհ է գնացել 1,5 միլիոն մարդ: Թուրքիան ժխտում է ցեղասպանության գոյությունը, բայց ընդունում է, որ ջարդեր են տեղի ունեցել: Նա հավասարապես հերքում է զոհերի թիվը: «Դա մի մեծ հաղթանակ է՝ ի հիշատակ մեր ծնողների: Այս որոշմամբ Ֆրանսիան վերջերս մի հստակ հաղորդագրություն է ուղարկել Թուրքիային, որպեսզի նա դադարեցնի իր ժխտո-

ղական պրոպագանդան, որի էստաֆետն իր վրա էր վերցնում «Quid»-ը»,- նշել է Հայ դատի պաշտպանության կոմիտեի նախագահ Հարութ Մարդիրոսյանը:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ
*AFP 06.07.05*

Ֆրանսիական հայտնի հանրագիտարանային հրատարակություն «Quid»-ը չորեքշաբթի մեղադրվել է Փարիզի դատարանի կողմից և պետք է վնասի խորհրդանշված՝ մեկ եվրո փոխհատուցում վճարի բազմաթիվ ասոցիացիաների՝ Հայոց ցեղասպանության վիճահարույց ներկայացման պատճառով: Հայ դատի պաշտպանության կոմիտեն, որին միացել էին բազմաթիվ ասոցիացիաներ, կասկածի տակ էին դնում 2003թ. «Quid»-ի հրապարակումը՝ 1915թ. Թուրքիայի կողմից իրագործված հայկական ջարդերի մասին, համարելով, որ դա կտանի պատմական այդ իրադարձության ցեղասպանական բնույթի ժխտմանը: Իր որոշման մեջ Գերագույն ատյանի դատարանը հաստատել է, որ «Quid»-ի կողմից ներկայացումն անհիմն է, ...քանի որ այն սովորական, գրեթե հարաբերական էր դարձնում «մեկնաբանված փաստի իրականությունն ու պատմական ընդգրկումը»: Ըստ դատարանի «Quid»-ը «այդ համայնքի բարեկամներին ու ժառանգներին, ինչպես նաև խմբակցություններին, որոնք այդ իրադարձությունների հիշատակի պահպանման առարկան են հանդիսանում, անհանգստություն և բարոյական ցավ է պատճառել»: ...Հետևաբար, «Ռոբեր Լաֆֆոն» հրատարակչությունը և «Quid» ընկերությունը... դատապարտված են վճարել միասնաբար մեկ եվրո փոխհատուցում այդ ասոցիացիաներից յուրաքանչյուրին: Երկու ընկերություններն էլ հավասարապես պետք է պաշտոնական հաղորդագրություն հրապարակեն՝ ընդգրկելով այս որոշումը երեք օրաթերթերում և երեք շաբաթաթերթերում, ինչպես նաև «Quid»-ի ինտերնետ էջում: Հայերը վերջերս են հիշատակել ջարդերի 90-ամյակը, որոնք պաշտոնապես ճանաչվել են բազմաթիվ երկրների կողմից որպես ցեղասպանություն, որի արդյունքում 1,5 միլիոն մարդ է զոհվել: Թուրքիան հերքում է ցեղասպանության թեզը, համարելով, որ խոսքը պատժելիության մասին է քաղաքացիական պատերազմի համատեքստում: